Տեղն ու ժամը

Մինչև հինգ օր առաջ, նախքան կոշկակարի գործը սովորելը սովորում էինք զինվորի գործը, ակադեմիկոսի քղամիդը ուսելուց շատ առաջ հագնում էինք զինվորի շինելը, նախագահական երդում կալուց շատ ու շատ առաջ զինվորական երդում էինք տալիս:

Ամեն ինչից առաջ և ամենասկզբում զինվոր էինք մեզնից թաքուն:

Կոշկակարի գործը սովորելուց հետո մնում էինք զինվոր, ակադեմիկոսի քղամիդը ուսելուց հետը դարձյալ զինվոր էինք, նախագահական երդում կալուց հետո վերսին զինվոր էինք:

Ամեն ինչից հետո և ամենավերջում զինվոր էինք և այդ մասին չգիտեինք:

Եվս և զինվոր էինք միաժամանակ՝ կոշկակար լինելու հետ միաժամանակ, ակադեմիկոս սպասվելու հետ միաժամանակ, նախագահ օծվելու հետ միաժամանակ:

Միշտ զինվոր էինք՝ ժամանակից դուրս, ժամանակից առաջ, ժամանակից անդին անընդհատ զինվոր էինք: Սա էր մեր ճակատագիրը, դատապարտված էինք այդպես: Օրհնանք էր, թե նզովք՝ դժվար է ասել: Ասված, Ադամին նզովելով, դատապարտեց աշխատանքի, և Ադամը, որ դրախտում ընդամենը տնկված էր խնձորենու նման ու թզենու չափ, սրբեց իր ճակատի քրտինքը, գնահատեց ինքն իրեն և փրկվեց: Նույն Ասվածը, միևնույն Ադամին նզովելով, դատապարտեց ազատության, և այդ Ադամը, որ դրախտում տնկված է թզենու նման ու խնձորենու չափ, ծածկեց իր ամոթոյքը, գիտցավ Եվային, գիտակցեց ինքն իրեն և մարդ դարձավ: «Ասված ինքն էլ, տարակուսած չի հասկանում ինչ անի. «Տանի՞, թողնի՞, - ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս, թե էն»: Այդպես է:

Եվ այդ զինվորը, որ մենք էինք, քանի որ ժամանակից դուրս էր, չէր կարողանում իր կռիվը գտնել ժամանակի մեջ, իր կռվի ժամը չգիտեր, մնում էր անկռիվ, կամ կռվում էր ինքն իր դեմ:

Մենք զինվոր էինք ոչ միայն միշտ: Մենք զինվոր էինք ամենուր՝ և՛ Ասիոով դեռևս բնակեցված Արևելքում, և՛ Ասիոուց վաղուց թոթափված Արևմուտքում, և՛ անէպոս Ամերիկաներում: Ստիպված զինվոր էինք, զինվոր էինք ամենուր՝ տարածությունից դուրս, տարածությունից առաջ, տարածությունից անդին անընդհատ զինվոր էինք և այդ մասին չգիտեինք:

Եվ այդ զինվորը, որ մենք էինք, քանի որ տարածությունից դուրս էր, չէր կարողանում իր կռիվը գտնել տարածության մեջ, իր կռվի տեղը չգիտեր, մնում էր անկռիվ, կամ կռվում էր ինքն իր դեմ:

Եթե մինչև դուրս է ժամանակից ու տարածությունից, բայց հրեշտակ չէ, ուրեմն՝ մեռած է կամ անկոպ աչքերով մեռյալ է, որը թաղում է իր մեռելներին: Մենք ապրում էինք այդպես: Մենք մեռյալ էինք և մեր մեռելին հպարտորեն հանում ու հպարտորեն թաղում էինք մի ուրիշ գերեզմանատուն, սիրով հանում ու սիրով թաղում էինք երրորդ գերեզմանատուն: Երանությամբ հանում ու երանությամբ թաղում էինք անընդհատ: Մի բանով պիտի զբաղեցնեինք մեզ և շատ լավ զբաղեցնում էինք՝ տեղը-տեղին, մանրամասնված, նրբանկատորեն և ծիսակարգված այնպես ու այնքան, որ փոռապանը թաղվելիս արքայից արքա էր: Այդպես էր, որովհետև արքա չունեինք թաղելու, որովհետև չգիտեինք արքային հոտարկավորել:

Ասելիքս այն է, որ ժամանակից ու տարածությունից դուրս գոյավորողը, եթե նույնիսկ հրեշտակ էլ լինի և հրեշտակի պես անմահ ապրի մանավանդ, հայրենիք չի կարող ունենալ և դրա պետքը չունի հատկապես: Իսկ հայրենիք չունեցողը հայրենիքի զինվոր չի կարող լինել, լավագույն դեպքում նա հայրենիքի գաղափարի զինվոր է:

Մինչև հինգ օր առաջ մենք հայրենիքի գաղափարի զինվոր էինք: Բայց այսօր, երբ ինքներս մեզ գտել ենք տարածության մեջ և ինքներս մեզ բռնել ժամանակի հոսքում, այլևս հայրենիքի զինվոր ենք և ոչ թե հայրենիքի գաղափարի: Իսկ հայրենիքի զինվորը իր կռվի տեղը պետք է իմանա, եթե չիմանա էլ, մեր մեջ նորից կգտնվի այն պառավը, որը շաղգամի արտը տրորող Դավթին ցույց կտա Կոզբադին հարկահավաքի տեղը: Հայրենիքի զինվորը իր կռվի ժամն էլ պետք է իմանա, եթե չիմանա էլ նույնիսկ, մեզանում նորից կհայտնվի Դեղչուն Ծամը, որպեսզի Դավիթը կռվի մեջ նետվի իր հոր Կաթնաղբյուրից մի ափ ջուր խմելուց հետո:

Իր կռվի տեղն ու ժամը իմացող զինվորը երբեք չի հնչի այնտեղ, որտեղ չի հրամանել, այսինքն՝ աշխարհը ճշտող, ճշգրտող զինվոր է, աշխարհը բարոյական չափումների մեջ դնող զինվոր: Այդ բանը գիտեին հին հույները և Դանիել Վարուժանը: Երկուսն էլ կերպեցին Նեմեսիս ապտվածուհու արյանը: Քանի դեռ Հունաստանում Նեմեսիսին չէին իջեցրել պատվանդանից, հույնը Պլատոն էր ու Պերիկլես: Իսկ մենք Վարուժանի կերպածը փակել ենք բանաստեղծի արվեստանոցում և լավ է, որ չենք ջարդել, երևում է, որ դեռ չենք ջարդել: Զարմանալի ապտվածուհի է Նեմեսիսը, նույնիսկ՝ մի քիչ արտառոց, նաև՝ մի քիչ անհասկանալի: Այդ խենթուհին իրար է բերում իրարամերժ երկու բան՝ արդարությունն ու վրիժառությունը: Երկվորյակելով միավորում է այնպես, որ ստացվում է՝ Արդար Վրիժառություն և սրայրվածը միավորյալ է այնքան, որ արժանի է պաշտամունքի ու երկրպագության:

Ուրեմն՝ կեցցե՛ Արդար Վրիժառությունը, ուրեմն, երկրպագելով Նեմեսիսին, իմ ամանորյա բոլոր բաժակները բարձրացնում եմ իր կռվի տեղն ու ժամը իմացող զինվորի համար, աշխարհը ճշտող ու ճշգրտող զինվորի համար:

Սա էր իմ ասելիքը այսօր և ասվեց այսպես: Զոր ինչ գրեցի՝ գրեցի:

ՍԱՍՈՒՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

Արցախյան ակնթարթներ

Հերթական հաղթանակից հետո

Սարսանգի ջրամբարը վերցված է